

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՀԱՌԸ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԻ ՋՈՐԱՀԱՆԳԵՍԻՆ 1941 ԹՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՐՄԻ ՇՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ընկեր կարմիր-բանակայիններ և կարմիր-նավատորմայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ, բանվորներ և բանվորուհիներ, կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ, ինտելիգենտ աշխատանքի աշխատողներ, ժամանակավորապես գերմանական ավազակների լծի առկա ընկած եղբայրներ ու քույրեր մեր թշնամու թիկունքում, մեր փառապանդ պարտիզաններ ու պարտիզանուհիներ, որ քարուքանդ եք անում գերմանական զավթիչների թիկունքները:

Սովետական կառավարութան և մեր բոլշևիկյան պարտիայի անունից ողջունում եմ ձեզ և շնորհավորում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյուցիայի XXIV տարեդարձը:

Ընկերներ: Ծանր պայմաններում է վիճակվում մեզ այսօր տոնելու Հոկտեմբերյան ռեյուցիայի XXIV տարեդարձը: Գերմանական ավազակների ուխտադրուժ հարձակումը և մեր վզին վաթաթված պատերազմը սպառնալիք են ստեղծել մեր երկրի համար: Մենք ժամանակավորապես կորցրել ենք մի շարք մարզեր, թշնամին կանգնած է Լենինգրադի և Մոսկվայի դռների առաջ: Թշնամին հույս ունեն, թե հենց առաջին հարվածից հետո մեր բանակը ցրտուցան կարվի, մեր երկիրը ծունկ կչոքեցվի: Իայց թշնամին սաստիկ սխալվեց:

Չնայած ժամանակավոր անհաջողություններին՝ մեր բանակը և մեր նավատորմը հերոսաբար հետ են մղում թշնամու զրոհները ամբողջ Ֆրոնտի երկարութամբ՝ ծանր կորուստներ պատճառելով նրան, իսկ մեր երկիրը, — մեր ամբողջ երկիրը, — կազմակերպվել ու դարձել է մի միասնական մարտական լազեր, որպեսզի մեր բանակի և մեր նավատորմի հետ միասին կենսագործի գերմանական զավթիչների ջախջախումը:

Օրեր են եղել, երբ մեզ երկիրն է՛լ ավելի ծանր դրության մեջ է գտնվել: Հիշեք 1918 թվականը, երբ մենք տոնում էինք Հոկտեմբերյան ռեյուցիայի առաջին տարեդարձը: Այն ժամանակ մեր երկրի երեք քառորդը գտնվում էր օտարերկրյա ինտերվենտների ձեռքին:

Ուկրաինան, Կովկասը, Միջին Ասիան, Ուրալը, Սիբիրը, Հեռավոր Արևելքը ժամանակավորապես կորցրել էինք մենք: Մենք չունեինք զաշնակիցներ, մենք չունեինք Կարմիր Բանակ, — մենք այն նոր էինք սկսել ըստեղծել, հացը չէր հերիքում, չէր հերիքում զենքը, պակասում էր հանդերձանքը:

14 պետութիւններ այն ժամանակ վրա էին տալիս մեր երկրին: Բայց մենք չէինք վհատուում, հույսներս չէինք կորցնում: Պատերազմի կրակի մեջ այն ժամանակ մենք կազմակերպեցինք Կարմիր Բանակն ու մեր երկիրը ռազմական լագերի վերածեցինք: Մեծ Լենինի ոգին էր այն ժամանակ մեզ ոգևորում պատերազմ մղելու ինտերվենտների դեմ, և ի՞նչ: Մենք ջախջախեցինք ինտերվենտներին, վերադարձրինք բոլոր կորցրած տերիտորիաները և հաղթութիւն ձեռք բերինք:

Այժմ մեր երկրի դրութիւնն անհամեմատ ավելի լավ է, քան 23 տարի սրանից առաջ:

Այժմ մեր երկիրը բազմապատիկ ավելի հարուստ է թե՛ արդյունաբերութեամբ, թե՛ պարենամթերքներով, թե՛ հումքով, քան 23 տարի առաջ: Մենք այժմ ունենք դաշնակիցներ, որոնք մեզ հետ միասին միասնական ֆրոնտ են բռնում ընդդէմ գերմանական զավթիչներին: Այժմ մեր կողմն է հիտլերյան բռնակալութեան լծի տակ ընկած Եվրոպայի բոլոր ժողովուրդների համակրութիւնն ու աջակցութիւնը: Մենք այժմ երեւելի բանակ և երեւելի նավատորմ ունենք, որոնք իրենց կրծքով են պաշտպանում մեր հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը: Մենք չունենք լուրջ պակասութիւն ոչ պարենամթերքների, ոչ սպառազինութեան և ոչ էլ հանդերձանքի: Մեր ամբողջ երկիրը, մեր երկրի բոլոր ժողովուրդները հենարան են հանդիսանում մեր բանակի, մեր նավատորմի համար, օգնելով նրանց ջախջախելու գերմանական ֆաշիստների զավթողական հորդանքներին: Մեր մարդկային ռեզերվներն անսպառ են: Մեծ Լենինի ոգին և նրա հաղթական դրոշմը այժմ մեզ ոգևորում են հայրենական պատերազմի ելնելու այնպես, ինչպես 23 տարի առաջ:

Միթե կարելի է կասկածել, որ մենք կարող ենք և պետք է հաղթենք գերմանական զավթիչներին:

Թշնամին այնքան էլ ուժեղ չէ, ինչպես նրան պատկերում են միջանի վախեցած ինտելիգենտիկներ: Սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրան պատկերում են: Ո՞վ կարող է ժխտել, որ մեր Կարմիր Բանակը մեկ անգամ չէ, որ խուճապային փախուստի է մատնել գովաբանված գերմանական զորքերին: Եթե դատենք ոչ թե՛ գերմանական պրոպագանդիստների պարծենկոտ հայտարարութիւններով, այլ Գերմանիայի իրական դրութեամբ, ապա դժվար չի լինի հասկանալ, որ գերմանաֆաշիստական զավթիչները կատաստրոֆայի առաջ են կանգնած:

Գերմանիայում այժմ տիրում է սոֆն ու աղքատութիւնը. պատերազմի չորս ամսվա ընթացքում Գերմանիան կորցրել է չորսուկես միլիոն զինվոր-Գերմանիան արյունաքամ է լինում, նրա մարդկային անդերձներն սպառվում են, վրդովմունքի ուղին տիրում է ոչ միայն գերմանական զավթիչների լծի տակ ընկած՝ Եվրոպայի ժողովուրդներին, այլ նաև ըստ գերմանական ժողովրդին, որոնք պատերազմի վերջը չեն տեսնում: Գերմանական զավթիչները լարում են իրենց վերջին ուժերը: Դատկած չկա, որ Գերմանիան չի կարող երկար գերմանալ աշխարհի լարման: Էլի միջանի ամիս, էլի մի կես տարի, զուցե մի տարի, — և հիտլերյան Գերմանիան կոտայթի իւոճրագործութիւնների ծանրութեան տակ:

Ընկեր կարմիր-բանակայիններ և կարմիր-նավատորմայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ, պարտիզաններ և պարտիզանուհիներ:

Ձեզ է նայում ամբողջ աշխարհը, որպես այն ուժին, որն ընդունակ է ոչնչացնելու գերմանական զավթիչների թալանչիական հրոսակախմբերին: Եվ թող այն ստրկացված ժողովուրդները, որոնք ընկել են գերմանական զավթիչների լծի տակ, ձեզ են նայում որպես ազատարարների: Ձեզ մեծ ազատագրական միտիա է բաժին ընկել: Ուրեմն, արժանի եղեք այդ միտիային: Այն պատերազմը, որ դուք եք մղում, ազատագրական պատերազմ է, արդարացի պատերազմ է: Թող ձեզ այդ պատերազմում ոգևորի մեր մեծ նախնիքները — Ալեքսանդր Նեվսկու, Դիմիտրի Դոնսկոյի, Կուզմա Մինինի, Դիմիտրի Պոժարսկու, Ալեքսանդր Սուվորովի, Միխայիլ Կուտուզովի — քաջարի օրրազը: Թող ձեզ հովանի լինի Մեծ Լենինի հաղթական դրոշմը:

Լիովին ջախջախենք գերմանական զավթիչներին:

Մահ գերմանական օկուպանտներին:

Կեցցե մեր փառապանծ հայրենիքը, նրա ազատութունը, նրա անկախութունը:

Լենինի դրոշի ներքո — առաջ գեպի հաղթութուն:

2844